ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Քաղսի համայնք, հասցե Կոտայքի մարզ,գյուղ Քաղսի
6-րդ փողոց,1-ին շենք, հեռ/սու 099-90-40-50, էլ.փոստ qaxsi.kotayk@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«31» օգոստոսի 2012թվականի N38-Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՔԱՂՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՕՐՎԱ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՋՐԱՄԲԱՐԸ «ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով.
համայնքի ավագանին Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Քաղսի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող Քաղսի համայնքի վարչական տարածքում գտնվող խմելու ջրի օրվա կարգավորիչ ջրամբարը մինչև 2035թվականի հուլիսի 1-ը անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրով հանձնել «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ:

2.Քաղսի համայնքի ղեկավարին՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի համապատասխան սպասարկման գրասենյակում «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գլխավոր տնօրենի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված պայմանագիրը կամ դրա կնքման գործարքը իրականացնելու համար լիազորել իրավասու անձի:

*Կողմ6* *Դեմ 0* *Ձեռնպահ0*

*Ավագանու անդամներ՝*

1. Ալեքսանյան Սահակ
2. Գրիգորյան Վաղինակ
3. Դավթյան Սամվել
4. Ենոքյան Էդիկ
5. Խուրշուդյան Գագիկ
6. Խուրշուդյան Գևորգ

Համայնքի ղեկավար՝ Ս.Դավթյան